



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02**

21 մարտի 2024 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

գ. Փամբակ

Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Սուրեն Կոստանդյանը:  
Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

**Մասնակցում էին՝**

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Արշակ Սրապյանը, Արայիկ Քոչարյանը, Գրիգոր Կարապետյանը, Շուշանիկ Հակոբյանը և Էմմա Գասպարյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը և Նաիրա Հարությունյանը:

**Նիստից բացակայում էին՝**

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սերյոժա Սարգսյանը, Պավլիկ Պապինյանը և Արմենուհի Ոսկանյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սևակ Խաչատրյանը և Թիանա Բոջուկյանը:

Նիստին նեկա էին նաև վարչական ղեկավարներ:

**Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 10 անդամ**

**ՆԻՍՏԸ** - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 13.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստ վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 23-26-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

23. 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի բնակիչ Արմեն Էդիկի Դանիելյանի /իրավահաջորդ Էդվարդ Արմենի Դանիելյանի /ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

24. «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

25. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

26. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի հուլիսի 04-ի թիվ 95-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

**Քվեարկությամբ, կողմ՝ 10 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:**

**Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծով:  
Քվեարկությամբ, կողմ՝ 10 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 015-Ա/:**

**Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.  
Հաստատված օրակարգը՝**

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի մարտի 21-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման ու իրականացման մասին:

զեկ. Ռ. Մինասյան

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

4. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2023թ-ի IV եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

5. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Սեփականության իրավունքով Տարոն Սամվելի Գևորգյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Սեփականության իրավունքով Արեն Հովսեփյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին: զեկ. Ա. Օհանյան
8. Սեփականության իրավունքով Արտակ Թումանյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին: զեկ. Ա. Օհանյան
9. Սեփականության իրավունքով Արթուր Մխիթարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին: զեկ. Ա. Օհանյան
10. Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին: զեկ. Ս. Կոստանդյան
11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին: զեկ. Ռ. Մինասյան
12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին: զեկ. Ռ. Մինասյան
13. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին: զեկ. Ռ. Մինասյան
14. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 02.03.2022թ-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին: զեկ. Ռ. Մինասյան
15. Փամբակ համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առեվտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լուրջությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին: զեկ. Ռ. Մինասյան
16. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով և տիրազուրկ բնակչի հուղարկավորության համար տրամադրված սոցիալական աջակցության մասին: զեկ. Լ. Անդրիասյան
17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին: զեկ. Կ. Շերմազանյան
18. Փամբակ համայնքի Բազում բնակավայրի հրդեհից տուժած բնակիչներին կենցաղային տեխնիկա նվիրաբերելու մասին: զեկ. Ս. Կոստանդյան

19. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

20. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

21. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

22. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

23. 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի բնակիչ Արմեն Էդիկի Դանիելյանի /իրավահաջորդ Էդվարդ Արմենի Դանիելյանի /ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

24. «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

25. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

26. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի հուլիսի 04-ի թին 95-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

## ԸՆԹԱՑՔԸ՝

1. **ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման ու իրականացման մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքների ՏԻՄ-երը հաստատում են.

1. Աղբահանության իրականացման կարգը
  2. Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը
  3. Սանիտարական մաքրման սխեման
  4. Ոչ կենցաղային աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության
  5. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգ
- Առաջարկվում է նշված կարգերը հաստատել համաձայն ներկայացված 1-5 հավելվածների: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
- Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 016-Ա/:**

**2. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:
- Զեկուցողը ներկայացրեց, որ նախագծով առաջարկվում է համայնքի ՀՈԱԿ-ների՝ մանկապարտեզների, կրթադաստիարակչական ուսումնական հաստատությունների (կրթամարզամշակութային համալիրների երաժշտական, արվեստի, գեղարվեստի, պարարվեստի խմբեր, մշակույթի տներ և այլ) ծառայություններից օգտվողների համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ.
- 1) Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար.
  - 2) Զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաները, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաների համար.
  - 3) Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաների համար:
  - 4) Աբանց ծնողական խնամքի մնացած երեխաների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար.
  - 5) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ 1-ին կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների, ազատամարտիկների երեխաների համար.
  - 6) 1-ին կարգի հաշմանդամ երեխաների համար.

7) Փախստականի կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաների և աղետի կամ պատերազմական գոտուց Հայաստան (Փամբակ համայնք) տեղափոխված ընտանիքների երեխաների համար.

8) Չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների մեկ երեխայի համար.

9) Ուսումնամարզական խմբերի կարգային մարզիկների համար.

2. Սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ 50 տոկոսի դրույքաչափի կիրառմամբ.

1) 1-ին կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամ դարձած զինծառայողների, ազատամարտիկների երեխաների համար.

3) Երեք անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների մեկ երեխայի համար:

4) Խնամատար ընտանիքներում ընդգրկված երեխաների համար:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 017-Ն/:**

**3. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2023թ-ի IV եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը տեղեկացրեց, որ Փամբակ համայնքի բյուջեից 2023թ-ի IV եռամսյակում համայնքի թվով 12 սոցիալապես անապահով ընտանիքի հատկացված սոցիալական աջակցության /դրամական օգնության/ չափը կազմում է 470 000 ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 018-Ա/:**

**4. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2 լոտ հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելուն: Հողամասերը վարձակալության իրավունքով տրամադրվում են 10 տարի ժամկետով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 019-Ա/:**

**5. ԼՍԵՑԻՆ** - Սեփականության իրավունքով Տարոն Սամվելի Գևորգյանին պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Տարոն Սամվելի Գևորգյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, առաջարկում ենք տալ համաձայնություն Տարոն Սամվելի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող 06-070-0357-0044 կադաստրային ծածկագրով 0,8551 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության խոտհարքը՝ անասնաշենք կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 020-Ա/:**

**6. ԼՍԵՑԻՆ** - Սեփականության իրավունքով Արեն Հովսեփյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Արեն Հովսեփյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրելու մասին առաջարկում ենք տալ համաձայնություն սեփականության իրավունքով Արեն Ռուբենի Հովսեփյանին պատկանող 06-034-0111-0092 ծածկագրով 0,31405 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարքը, անասնաշենք կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 021-Ա/:**

**7. ԼՍԵՑԻՆ** - Սեփականության իրավունքով Արտակ Թումանյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Արտակ Թումանյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, առաջարկում ենք տալ համաձայնություն սեփականության իրավունքով Արտակ Էդիկի Թումանյանին պատկանող 06-019-0104-0045 ծածկագրով 0,2644 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը, ջերմոց կառուցելու նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 022-Ա/:**

**8. ԼՍԵՑԻՆ** - Սեփականության իրավունքով Արթուր Մխիթարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Արթուր Մխիթարյանի հայտը՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքը տրամադրելու մասին, համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլատրությունը, ճարտարապետահատակագծային առաջադրանքը, առաջարկում ենք տալ համաձայնություն սեփականության իրավունքով Արթուր Մխիթարյանին պատկանող 06-019-0110-0006 ծածկագրով 0,05 հա գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության 3-րդ կարգի վարելահողը, թռչնանոցի կառուցման և սպասարկման նպատակով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողերի գործառնական նշանակության փոխադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 023-Ա/:**

**9. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանոյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Մուշեղ Ֆրունզեի Գրիգորյանի երկարամյա աշխատանքային փորձն ու մասնագիտական գիտելիքները, այն հանգամանքը որ համայնքապետարանի հաստիքացուցակում առկա է տեղակալի թափուր հաստիք, առաջարկում է նրան նշանակել Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում:



Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 024-Ա/:**

**10. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց տվյալ հանրային սննդի օբյեկտին հարակից, Փամբակ համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար Փամբակի համայնքապետարանի համաձայնության վերաբերյալ Փամբակի համայնքապետարանի և հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց միջև կնքվում է համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագիր՝ վարձավճարի չափը սահմանելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով սահմանված տվյալ տարածքի հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 15 տոկոսի չափով՝ տվյալ սեզոնի համար: Պայմանագրի կնքման և թույլտվության տրամադրման ընթացակարգը և պայմանները ներկայացված է հավելվածում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 025-Ն/:**

**11. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները: Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտներ են հանդիսանում կարաոկները, դիսկոտեկները, հեստապարային ակումբները, բաղնիքները, շոգեբաղնիքները, սաունաները, մերսման սրահները (բացառությամբ բուժական մերսման սրահների), որոնք Փամբակ համայնքում պետք է տեղակայվեն բազմաբնակարան շենքի բնակելից և (կամ) ոչ բնակելի, անհատական բնակելի

տներից, կրթական և մշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, մարզական և սոցիալական կազմակերպություններից, բժշկական հաստատություններից, այլ հիմնարկներից, գրասենյակներից ու հաստատություններից, հյուրանոցներից, հանրային սննդի օբյեկտներից, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից սահմանված հեռավորությունների վրա: Հեռավորության չափը սահմանված է կարգում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 026-Ն/:**

**12. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում նախկինում ավագանու կողմից հաստատված Փամբակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները ուժը կորցրած ճանաչել և հաստատել նոր մեթադաբանությամբ մշակված կանոնները: Սույնով սահմանվում են Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող բոլոր տեսակի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից հանրային սննդի կազմակերպման ու իրականացման կանոնները:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 027-Ն/:**

**13. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 02.03.2022թ-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ նախորդ կետով քննարկվեց նոր մեթադաբանությամբ մշակված համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները հաստատելու մասին հարցը: Առաջարկում ենք ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 02.03.2022թ-ի «Փամբակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին» թիվ 20-Ն որոշումը: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 028-Ն/:**

**14. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու համար սահմանվում է.

1) բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, ինչպես նաև կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից մինչև 100 մետր հեռավորության վրա՝ ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

2) վերը նշված տարածքներից մինչև 100-1000 մետր հեռավորության վրա՝ ժամը 23.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը,

3) Նշված տարածքներից 1000 մետր և ավելի հեռավորության վրա՝ ժամը 24.00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 7.00-ն ընկած ժամանակահատվածը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 029-Ն/:**

**15. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սոցիալապես անապահով և տիրազուրկ բնակչի հուղարկավորության համար տրամադրված սոցիալական աջակցության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լիլիթ Անդրիասյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2024 թվականի փետրվար ամսվա ընթացքում Փամբակ համայնքի բյուջեից մեկ տիրազուրկ և սոցիալապես անապահով բնակչի հուղարկավորության համար տրամադրվել է 100000 ՀՀ դրամ սոցիալական աջակցության /դրամական օգնության/: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 030-Ա/:**

**16. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կինա Շերմազանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ 2023 թվականի դեկտեմբերից մինչև մարտի 13-ը տարբեր ծրագրերով և համայնքի բյուջեով ձեռք է բերվել 111,930,543 ՀՀ դրամի հիմնական միջոց: Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 031-Ա/:**

**17. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի Բազում բնակավայրի հրդեհից տուժած բնակիչներին կենցաղային տեխնիկա նվիրաբերելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը: Ձեկուցողը ներկայացրեց, որ հիմք ընդունելով Բազում գյուղի վարչական ղեկավար Արթուր Ծատուրյանի զեկուցագիրը՝ Բազում գյուղում 2023 թվականի հունվարի 3-ին բնակելի փայտյա հանրակացարանում տեղի ունեցած հրդեհից տուժած բնակիչների հետ հանդիպման և նրանց կարիքների գնահատման մասին, առաջարկում ենք տալ համաձայնություն թվով 6 կենցաղային տեխնիկա՝ լվացքի մեքենա ձեռքբերելուն և հրդեհի հետևանքով տուժած ներքոնշյալ բնակիչների ընտանիքներին անհատույց նվիրաբերելուն:

- 1) Դարբինյան Հայկուհի Հմայակի /ծնված 21.07.1977թ./
- 2) Պապիկյան Ջոյա Մարտունի /ծնված 15.11.1970թ./
- 3) Ծատուրյան Աշոտ Երջանիկի /ծնված 28.06.1968թ./
- 4) Հարությունյան Սեյրան Վալենտինի /ծնված 05.02.1964թ./
- 5) Վարդանյան Գերասիմ Գուրգենի /ծնված 12.06.1955թ./
- 6) Թամազյան Արմեն Անդրանիկի /ծնված 20.12.1990թ./ :

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 032-Ա/:**

**18. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ նախագծով ներկայացված 9 լոտ աճուրդի ներկայացված հողակտորներին ավելացվում է ևս 3-ը: Առաջարկվում է տալ համաձայնություն 12 լոտ հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելուն և 4 լոտ հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 033-Ա/:**

**19. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի՝ մանկապարտեզների լիցենզավորմա գործընթացն իրականացնելու նպատակով առաջարկուն ենք Փամբակ համայնք Եղեգնուտ գյուղի 1-ին փողոց 3 մանկապարտեզ հասցեում գտնվող 06-036-0066-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով տրամադրել ՀՀ Լոռու Մարզի Փամբակ համայնքի «Եղեգնուտի Հեքիաթ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ: Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 034-Ա/:**

**20. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է.

01.01.01՝ Կառավարման ապարատ նախահաշվով, ընդհանուր բնույթի ծառայություններ՝ 4212

հոդվածում ավելացնել 2.000.000 դրամ էլեկտրաէներգիայի գումար, որը նախատեսված է

Փամբակի համայնքապետարանի տանիքին 15 կիլովատ եռաֆազ աբոնենտ հաշվառվելու,

Մարգահովիտի մանկապարտեզի եռաֆազ աբոնենտի հզորացման և Բազումի մշակույթի տան եռաֆազ աբոնենտի հզորացման համար:

Նույն նախահաշվի 4824 հոդվածում ավելացնել 93 000 դրամ, որպես տուգանքի վճար:

04.05.01՝ Ճանապարհային տրանսպորտ նախահաշվի 5113 հոդվածից պակասեցնել 4 200 900

ՀՀ դրամ, որպես վարչական բյուջեից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում: Խնայողությունը

առաջացել է նախագծերի նախնական վճարներից, որը ամբողջությամբ կատարվել է համայնքի բյուջեից:

01.06.01՝ Ընդհանուր բնույթի ծառայություններ նախահաշվի 5129 հոդվածում ավելացնել 750 000

ՀՀ դրամ, 6 լվացքի մեքենա ձեռք բերելու համար, որոնք պետք է հատկացվեն հրդեհից տուժած

Բազում գյուղի բնակիչներին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 035-Ն/:**

**21. ԼՍԵՑԻՆ** - 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի բնակիչ Արմեն Էդիկի Դանիելյանի

/իրավահաջորդ Էդվարդ Արմենի Դանիելյանի /ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով ՀՀ կառավարության 13.11.2008թ-ի «Աղետի գոտու գյուղական բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հաշվառման, բնակարանային ապահովության առաջնահերթության կարգը հաստատելու մասին» թիվ 1337-Ն որոշմամբ հաստատված կարգի 9.1 կետը, ՀՀ վարչական դատարանի 07.03.2023թ-ին հրապարակված վճիռը (վարչական գործ թիվ ՎԴ6/0140/05/19), հիմք ընդունելով «Արկատ» ՍՊԸ իրավաբանական գրասենյակի իրավաբան-խորհրդատու, Էդվարդ Արմենի Դանիելյանի ներկայացուցիչ Էլիտա Սպարտակի Մուրադյանի 04.03.2024թ-ի գրությունը, Լեռնապատ բնակավայրի մի քանի բնակիչների դիմումները, առաջարկում ենք Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի բնակիչ Արմեն Էդիկի Դանիելյանի իրավահաջորդ Էդվարդ Արմենի Դանիելյանի դիմումը բավարարել:

Հաստատել այն փաստը, որ Արմեն Էդիկի Դանիելյանի /իրավահաջորդ Էդվարդ Արմենի Դանիելյանի/ ընտանիքը մինչև 1988 թվականի դեկտեմբերի 7-ը ՀՀ Լոռու մարզի Լեռնապատ գյուղում ունեցել է բնակելի տուն, որը քանդվել է երկրաշարժի հետևանքով: 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ ընտանիքը բաղկացած է եղել 4 անձից

1. Դանիելյան Էդիկ Հայկի
2. Հակոբջանյան Գայա Սուրենի,
3. Դանիելյան Արմեն Էդիկի,
4. Դանիելյան Գոհար Էդիկի:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 036-Ա/:**

**22. ԼՍԵՑԻՆ** - «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն ամրացված գույքը հետ վերցնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ հաշվի առնելով Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սարգիս Հակոբյանի 19.03.2024թ-ի զեկուցագիրն այն մասին, որ Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 04-ի թիվ 95-Ա որոշմամբ ՀՈԱԿ-ին ամրացված գույքացանկից կան գույքեր, որոնք կանոնադրությամբ կազմակերպությանը վերապահված գործառույթներն իրականացնելու ընթացքում չեն օգտագործվում, առաջարկում ենք կազմակերպությանը ամրացված համայնքի սեփականություն հանդիսացող

- 1) Ուազ մակնիշի մարդատար մեքենան
- 2) Կուլտիվատորը
- 3) Կցասայլակը

հետ վերցնել «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունից:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 037-Ա/:**

**23. ԼՍԵՑԻՆ** - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը իր կանոնադրությամբ սահմանված գործառույթներն իրականացնելու նպատակով անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի սեփականություն հանդիսացող 1 հատ ճանապարհային խոզանակը և Լեռնապատ գյուղի 1 հատ պարուր փոխարկիչով խոտամամլիչը /հակահավաքը/:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 038-Ա/:**

**24. ԼՍԵՑԻՆ** - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի հուլիսի 04-ի թին 95-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվում է Փամբակ համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 04-ի «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնելու մասին» թիվ 95-Ա որոշմամբ հաստատված հավելվածի ցուցակի 32-րդ տողում «Բեռնիչ» բառը փոխարինել «Տրակտոր /էքսկավատոր/ Բելառուս MTZ բեռնիչ» բառակապակցությամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 039-Ա/:**

**25. ԼՍԵՑԻՆ** - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2024 թվականի ապրիլի 15-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

**Քվեարկությամբ, կողմ՝ 10, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 040-Ա/:**

Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2024 թվականի ապրիլի 15-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 14.00-ն:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ


ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ

ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝



ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ





## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՐՏԻ 2024թվականի N 015-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի ԹԻՎ 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, Փամբակ  
համայնքի ավագանին՝ **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի  
ավագանու 2024թ-ի մարտի 21-ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը:  
ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի մարտի 21-ի թիվ 02  
հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. ՀՀ Լոռու մարզ Փամբակ համայնքում աղբահանության և սանիտարական  
մաքրման գործընթացի կազմակերպման ու իրականացման մասին:

3. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում տեղական վճարների գծով  
արտոնություններ սահմանելու մասին:

4. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին 2023թ-ի IV  
եռամսյակում տրամադրված սոցիալական աջակցության մասին:

5. Փամբակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական  
սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից  
վարձակալության իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու,  
մեկնարկային գները և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

6. Սեփականության իրավունքով Տարոն Սամվելի Գևորգյանին պատկանող  
հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

• 7. Սեփականության իրավունքով Արեն Հովսեփյանին պատկանող հողամասի  
նպատակային նշանակության փոփոխման մասին:

8. Սեփականության իրավունքով Արտակ Թումանյանին պատկանող հողամասի  
նպատակային նշանակության փոփոխման մասին:

9. Սեփականության իրավունքով Արթուր Մխիթարյանին պատկանող հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին:

10. Փամբակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

11. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները սահմանելու մասին:

12. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքում գտնվող սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին:

13. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին:

14. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 02.03.2022թ-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

15. Փամբակ համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առեվտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լուրջությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը սահմանելու մասին:

16. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով և տիրազուրկ բնակչի հուղարկավորության համար տրամադրված սոցիալական աջակցության մասին:

17. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

18. Փամբակ համայնքի Բագում բնակավայրի հրդեհից տուժած բնակիչներին կենցաղային տեխնիկա նվիրաբերելու մասին:

19. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքով օտարելուն, վարձակալության և կառուցապատման իրավունքներով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի և մրցույթի պայմանները հաստատելու մասին:

20. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

21. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2023թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 148-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

22. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական նիստի օր սահմանելու մասին:

23. 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի բնակիչ Արմեն Էդիկի Դանիելյանի /իրավահաջորդ Էդվարդ Արմենի Դանիելյանի /ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին:

24. «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպության ամրացված գույքը հետ վերցնելու մասին:

25. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով «Փամբակ կոմունալ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն ամրացնելու մասին:

26. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022թ-ի հուլիսի 04-ի թիվ 95-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՐՏԻ 2024թվականի N 016-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ  
ՄԱՔՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 20-րդ կետով և "Աղբահանության և սանիտարական մաքրման մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3, 4, 5, 6 և 7-րդ կետերով, 10-րդ հոդվածի 4-րդ կետով, 13-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով և 19-րդ հոդվածի 4-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբի հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանները և կարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 3-ի:

4. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում ոչ կենցաղային աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդները ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության՝ համաձայն հավելված 4-ի:

5. Սահմանել ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը՝ համաձայն հավելված 5-ի:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ  
ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ  
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
ՀԱԿՈՐՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ  
ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ  
ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ  
ՔՈԶԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ



## Կարգ

### ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության իրականացման

Աղբի հեռացումը Փամբակ համայնքի վարչական տարածքից պետք է կատարվի համայնքի սեփականություն հանդիսացող GAZ SAZ-3507 մակնիշի ինքնաթափ բեռնատարով և նվիրատվությամբ ստացված MAZ մակնիշի ինքնաթափ աղբատար մեքենայի, ZIL KO մակնիշի աղբատարի միջոցով, շաբաթական 4 անգամ, աղբամանների տեղադրմամբ, ինչպես նաև շրջիկ եղանակով անհատական, Փամբակ համայնքի վարչական բնակավայրերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբը պետք է հեռացվի մինչև աղբատար մեքենայի ամբողջությամբ լցվելը: Աղբատար մեքենան պետք է ենթարկվի ախտահանման ախտահանիչ լուծույթով:

Փամբակ համայնքի վարչական բնակավայրերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից աղբի հեռացումը պետք է կատարվի միայն աղբի հեռացման համար նախատեսված ինքնաթափ բեռնատար մեքենաներով, բնակիչների կողմից հավաքված աղբի բարձման և տեղադրված աղբամանների դատարկման միջոցով: Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պետք է պարտադիր հեռացվի՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

Աղբահանությունը Փամբակ համայնքում պետք է իրականացվի համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Փամբակ համայնքի վարչական բնակավայրեր՝

**Երկուշաբթի և ուրբաթ օրերին** հետևյալ վարչական բնակավայրերից՝

Մարգահովիտ, Բազում, Ազնվածոր, Լեռնապատ, Արջուտ:

**Երեքշաբթի և ուրբաթ օրերին** Դեբեդ, Եղեգնուտ, Վահագնի, Վահագնածոր, Փամբակ:  
Հետագայում աղբատար մեքենաների ավելացման դեպքում չորեքշաբթի օրերին կիրականացվի նաև մյուս բնակավայրերի աղբահանությունը:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ




Կ Ա Ր Գ

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում շինարարական և խոշոր եզրաչափի աղբի  
հավաքման և փոխադրման թույլտվության տրամադրման պայմանների

1. Սույն կարգով սահմանվում է Փամբակ համայնքում աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու կարգը:
2. Թույլտվությունը՝ տրվում է համայնքի ղեկավարի կողմից:
3. Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը (այսուհետ՝ հայտատու) համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ:
4. Թույլտվություն տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:
5. Թույլտվություն տալու հետ միաժամանակ, ավագանու կողմից համայնքի տարածքում սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հայտատուից գանձվում է տեղական տուրք:
6. Տեղական տուրքի վճարումը հաստատող անդորրագիրն ստանալուց հետո 3 օրվա ընթացքում հայտատուին է հանձնվում հաստատված թույլտվությունը:
7. Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, չեն համապատասխանում ավագանու կողմից հաստատված պայմաններին: Թույլտվություն ստանալու մասին հայտը գրավոր մերժվում է հայտի մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Թույլտվություն ստանալու մասին հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:
8. Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ԿՈՍԱՆԴՅԱՆ



## Կարգ

### ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սանիտարական մաքրման սխեմայի

Փամբակ համայնքում սանիտարական մաքրումը ներառում է ընդհանուր օգտագործման տարածքների (փողոցների, կամուրջների, հասարակական վայրերի, պուրակների, պատմամշակութային հուշակոթողների, համայնքի տարածքով անցնող մայրուղու և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, կենդանիների դիակներից, ձյունից:

Սանիտարական մաքրման աշխատանքները, կապված տարվա եղանակների հետ, իրենց բնույթով և խնդիրներով տարբեր են, այն սահմանափակվում է ամառային և ձմեռային մաքրմամբ:

**Ամառային մաքրում.** Այն իր մեջ ընդգրկում է մաքրման ձեռքի աշխատանք:

Ձեռքի աշխատանքի հիմնական նպատակն է սահմանված նորմերին համապատասխան ապահովելու ընդհանուր օգտագործման տարածքների մաքրումը աղբից, տերևակույտերից, կենդանիների դիակներից՝ բարելավելու միկրոկլիման և նվազեցնել օդի աղտոտվածության աստիճանը:

Աղբը հավաքվում է պարկերում և տեղափոխվում բեռնատարով:

**Ձմեռային մաքրում.** Այն իր մեջ ընդգրկում է, փողոցների մաքրումը ձյունից, սառցակույտերի մաքրումը և հեռացումը: Բացի ձյունից, ձմեռային մաքրման դեպքում ապահովում է փողոցների, մաքրումը (աղբի մաքրումը և հավաքումը) ձնատեղումների միջև ընկած ժամանակաշրջանում:

**Ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի ծավալը տարվա ընթացքում կազմում է՝ մոտ 12 տոննա:**

### Փամբակ համայնքում սանիտարական մաքրման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները

Փամբակ համայնքում սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներից առաջացող աղբի տեղափոխումը պետք է կատարվի միայն աղբահանության համար օգտագործվող ինքնաթափ բեռնատար մեքենաներով՝ ինքնաբարձման և ձեռքով բարձման միջոցով:

Փողոցներից ձյան մաքրման աշխատանքները պետք է կատարվի համապատասխան մասնագիտացված մեքենայի կամ դրան փոխարինող մեխանիզմների միջոցով:

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝


Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ



**Կիրառվող մեթոդներ**

ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի 1խմ աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող ըստ անշարժ գույքի նպատակային և /կամ/ գործառնական նշանակության

N	Աղբառաջացման օբյեկտ /անձ/ կամ գործունեության տեսակ	Առաջացած աղբի նորմատիվները տարի/խմ
1	<b>Մթերային խանութներ</b>	
ա	- 5-10 քմ առևտրային մակերես /25խանութ/	68 խ.մ.
2	<b>Առողջապահական կենտրոններ</b>	
ա	- 128 քմ առողջապահական մակերես /3 ԱԱՊԿ/	9 խ.մ.
3	<b>Կապ</b>	
ա	- 570 քմ մակերես /10 Հայփոստ ՓԲԸ/	7 խ.մ.
4	<b>Դեղատուն</b>	
ա	- 38 քմ մակերես /1 դեղատուն/	4 խ.մ.
5	<b>Հանրային սննդի օբյեկտներ</b>	
ա	-20-60 քմ-ից ավելի մակերես /1ոեստորան/	72 խ.մ.
6	<b>Հյուրատուն</b>	
ա	- 20 քմ մակերես /4 հյուրատուն/	2 խ.մ.
7	<b>Հանրակրթական դպրոցներ</b>	
ա	- 1500 քմ համար/13 դպրոց/	80 խ.մ.
8	<b>Կաթի վերամշակման և պահածոների գործարաններ</b>	
ա	- 1060 ք.մ արտադրական մակերես (5 արտադրություն)	67 խ.մ.
9	<b>ՀԷԿ</b>	
	-121 ք.մ մակերես/3 հէկ/	5 խ.մ.
10	Սմարթ կենտրոն 3899.22 քմ	20 խ.մ.





**Կարգ**  
**ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման**

Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողներ են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև մուտքագրումը համայնքի բյուջե Փամբակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու կողմից վերապահվել է Փամբակ համայնքի «Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ին:

«Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի հաշվապահը աշխատակազմին կամ համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի հավաքագրման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

Փամբակ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը և հաշվարկումը կատարվում է համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաչափերին համապատասխան՝

**Կենցաղային աղբի համար՝**


ըստ բնակության հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի.

**Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝**

ըստ 4 հավելվածով սահմանված աղբի առաջացման և դրույքաչափերը սահմանելու համար կիրառվող մեթոդների և աղբահանության վճար վճարողների հետ կնքված պայմանագրերի:

Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Փամբակ համայնքի ղեկավարը:

**ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՄԱՐՏԻ 2024թվականի N 017-Ն

